հանդիսացել գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում որակելու համար:

Ինչ վերաբերում է հայցվորի այն փաստարկներին, որ որոշման մեջ Ընկերության ՀՎՀՀ-ի և գործունեության հասցեի բացակայության պայմաններում, ըստ էության, բացակայում է նաև ընկերությունն իդենտիֆիկացնելու հնարավորությունը, ուստի որոշումը նաև այս առումով հանդիսանում է չպատճառաբանված, ապա Դատարանի գնահատմամբ դրանք անհիմն են և որոշման պատճառաբանված չլինելու փաստի հաստատման հիմք հանդիսանալ չեն կարող, քանի որ որոշման պատճառաբանվածության օրենսդրական պահանջը կրում է բովանդակային ծանրաբեռնվածություն, իսկ որոշմանն առաջադրվող ձևական պահանջների չպահպանումը չի կարող մեկնաբանվել որպես որոշման պատճառաբանության բացակայություն:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ հայցն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման:

<u>5. Դատական ծախսերը.</u>

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից օրենքով սահմանված կարգով վճարվել է իր կողմից ներկայացված պահանջների մասով պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ սույն որոշման պատճառաբանություններով հայցը մերժման ենթակա լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Այլ դատական ծախսեր սույն գործով չեն կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 270-րդ, 270.1-րդ և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 08.02.2024թ.-ին կայացված թիվ 491-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարկվելու պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Լիլիթ Սաղոյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am